Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1948 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց (այսուհետ՝ լիցենզավորված անձ) և պատասխանատու մասնագետների աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման որակի համապատասխանության գնահատման մոնիթորինգի (այսուհետ՝ մոնիթորինգ) իրականացման կարգը:

2. Մոնիթորինգի նպատակն է քաղաքաշինության գործունեության քաղաքականության մշակմանն ու բարելավմանն ուղղված տվյալների հավաքագրման, որակի գնահատման վերլուծության և արդյունքների գրանցման հնարավորության ստեղծումը, արդյունավետության գնահատումը, խնդիրների վերհանումը և այդ համատեքստում հավասար մրցակցային դաշտի ապահովումը:

3. Մոնիթորինգն իրականացվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ լիազոր մարմին) հրամանով՝ N 1 հավելվածի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ստորաբաժանման կողմից: Մոնիթորինգի գործընթացում կարող են ներգրավվել անկախ փորձագետներ:

4. Մոնիթորինգն իրականացվում է լիցենզավորված անձի կողմից փաստացի կատարված և ընթացիկ աշխատանքների կամ ծառայությունների մասին լիազոր մարմին ներկայացվող եռամսյակային հաշվետվությունների (այսուհետ՝ հաշվետվություն) ուսումնասիրության միջոցով:

5. Մոնիթորինգն իրականացվում է հետևյալ պարբերականությամբ և հիմքերով՝

1) մոնիթորինգն իրականացվում է տարեկան առնվազն մեկ անգամ.

2) լիցենզավորված անձանց կողմից ներկայացված հաշվետվությունների և այլ մարմիններում առկա գրանցամատյանների տվյալների հետ անհամապատասխանությունների առկայության դեպքում, որոնք կարող են հանգեցնել որակի գնահատման ցուցանիշների փոփոխության.

3) Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա.

4) որակի գնահատման հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով) ուղղված դիմում-բողոքների հիման վրա.

5) մատուցվող ծառայությունների որակի չափանիշների խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվական միջոցներում հրապարակված և կառուցապատողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններից ստացված տեղեկատվության հիման վրա:

6. Մոնիթորինգը ներառում է հետևյալ հիմնական ուղղությունները՝

1) ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 26-Ն հրամանի N 1 հավելվածով սահմանված տեղեկությունների՝ կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների նախագծանախահաշվային փաստաթղթերի, կատարողական ակտերի և պայմանագրերի ուսումնասիրություն և համադրում.

2) ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի N 24-Ն հրամանով սահմանված որակի գնահատման չափորոշիչների բացասական միավորների առկայություն.

3) փաստացի իրականացված աշխատանքների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների հավաստիության ուսումնասիրություն.

4) անբարենպաստ իրադարձությունների (միջադեպերի) մասին տեղեկատվության հավաքագրում, գրանցում, վերլուծություն.

5) հայտնաբերված անհամապատասխանության կամ անցանկալի իրադարձության պատճառի գրանցում և դրանց վերացման նպատակով միջոցառումների, առաջարկների մշակում:

7. Մոնիթորինգի իրականացման հրամանում նշվում են մոնիթորինգին մասնակցող անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, մոնիթորինգի ենթակա սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված ուղղությունները և ժամկետները:

8. Մոնիթորինգին մասնակցող անձը՝ իրավունք ունի մոնիթորինգ իրականացնելու համար, պահանջելու և ստանալու պարբերական գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

9. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված անձը՝ պարտավոր է տրամադրել մոնիթորինգի համար անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակները:

10. Մոնիթորինգի արդյունքները ամփոփվում են վերլուծական տեղեկանքով, որում նշվում են այն կազմելու ամսաթիվը, մոնիթորինգին մասնակցող անձանց կազմը, մոնիթորինգի անցկացման ժամկետը և արդյունքները:

11. Մոնիթորինգի մասին վերլուծական տեղեկանքը ստորագրում են մոնիթորինգ իրականացնող անձինք:

12. Մոնիթորինգի արդյունքում վերլուծական տեղեկանքում կարող են նշվել այն թեմաները, որոնք պետք է դասավանդվեն շարունակական մասնագիտական վերապատրաստման ընթացքում: Վերապատրաստման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները հիմք են հանդիսանում միջոցառում իրականացնող անձանց կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման թեմաներն ընտրելու համար:

13. Մոնիթորինգի ընթացքում որակի գնահատման կարգի պահանջներին լիցենզավորված անձի քաղաքաշինական գործունեության անհամապատասխանություն հայտնաբերվելու դեպքում լիազոր մարմինը նախազգուշացնում է լիցենզավորված անձին՝ առաջարկելով տասնհինգօրյա ժամկետում վերացնել հայտնաբերված անհամապատասխանությունը: Անհրաժեշտության դեպքում թույլատրվում է ժամկետի երկարաձգում՝ ըստ հիմնավորված միջնորդության:

14. Եթե ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 26-Ն հրամանի N 1 հավելվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում քաղաքաշինության գործունեության սուբյեկտը չի վերացնում առկա անհամապատասխանությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր

կամ նյութեր կամ լրացուցիչ պարզաբանումներ՝ գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթերը համարվում են չներկայացված:

15. Վերլուծական տեղեկանքի վերջնական տարբերակը ներկայացվում է լիազոր մարմնի ղեկավարին:

16. Լիազոր մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատական կամ վերադասության կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

25.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ